հրամայում եմ, որ քեզ գցեն շների առջև, որ քեզ չարաչար կերպով լափեն: Ժամկոչը հարցնում է՝ ինչո՞ւ: Խանը հարցնում է՝ քեզ ո՞վ հրաման տվեց, որ բարձր կանչես և մեր մոլլայի կանչը խափանես: Ժամկոչն ասաց. «Լսիր, իշխան, ես տեսա, մոլլան ձայնում էր և քաղաքի շները ոռնում էին նրա հետ, երբ մոլլան լռում էր, լռում էին նաև շները, երբ ձայնում էր մուղրին, ոռնում էին նաև շները: Ես մտածեցի՝ արդ շները ոռնում են, նրանց պատիժ չկա, և ոչ տուգանք, ես էլ այն շներից մեկն եմ, ես էլ ոռնամ, թե շներին պատիժ ու տուգանք լինի, ինձ էլ թող լինի:

Երբ մահմեդականները այս լսեցին, ծիծաղեցին ու ասացին՝ դուք ինքներդ ձեզ շուն արիք, արդ գնացեք, ոռնացեք իբրև շուն: Եվ այն օրից մինչև այսօր ժամկոչը բարձրաձայն կանչում է, իսկ նրա ձայնը մտնում է մզկիթը, որին կոչում են Շեյխսաֆի. ասում են՝ հայոց շներն են ոռնում: Արդ՝ ոչ ոք թող այս խոսքերը մեզ համար նախատինք ու անարգանք չհամարի, այլ պարծանք ու փառք: Որովհետև սուրբ Պողոսը ասում է, որ թե վայրիվերո, թե ճշմարտությամբ Քրիստոսն է քարոզվում:

ԳԼՈՒԽ ԻԴ
ԽՈՍՐՈՎ ԽԱՆԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Զաղաթա-Քոթուկ-Մահմադ խանը չափազանց ագահ էր, ժլատ ու հափշտակիչ, քանզի սպաների ռոճիկները ըստ սովորության արգելում, չէր տալիս: Եվ վերացրեց զորքի իշխանությունը և ոչ ոքի որևէ գործ չէր տալիս ու նրանցից ոչ ոքի չէր ուղարկում հարկահանության, այլ տալիս էր նրանց, որոնք իր հետ էին եկել: Այս պատճառով ողջ զորքը զզվեց և միաբանվելով ամբաստանագիր գրեցին, տվին Փիլիպոս կաթողիկոսին՝ կնքեց, և ուղարկեցին շահին:

Շահը այս իմանալով՝ Խոսրով անունով ազգությամբ վրացի մի մարդ ուղարկեց և պատվիրեց նրան իշխել Երևանի վրա, իսկ Մահմադին ուղարկել իր մոտ: Խոսրովը գնաց Երևան և նստեց իբրև խան, իսկ Մահմադին ուղարկեց Սպահան: Այս Խոսրովը լավ, բարեսեր և քրիստոնյաներին սիրող մարդ էր: Գնում էր վանքերը, պարգևներ ու ընծաներ էր տալիս վանքերին: Նաև գթասիրտ ու

առատաձեռն էր, եթե նրան մեկը մի ձու էր տանում, իսկ նա սրան մի պատմուճան էր հագցնում: Նաև քրիստոնյաների հարկը թեթևացրեց: Վերացրեց ճանապարհների մաքսը: Ամեն բանի առատություն ու լիություն էր տիրում, ամեն ինչ աժան էր: Ինքը գուսան էր ու երաժիշտ, երգիչ էր ու երգեր հորինող: Երբ գնում էր վանքերը, կանչում էր դպրոցների մանուկներին, երգել էր տալիս շարական ու տաղ, և էր այդպիսի բարեվայելուչ վարքով: Երբ նստում էր ուտելու և ըմպելու, հայոց մեծամեծներին նստեցնում էր իր հետ: Դատաստան կտրելիս ուղղադատ էր և իրավարար: Եվ այդպես մնում էր նա Երևանում: Իսկ նրա գնալու մասին հետո կխոսենք:

ԳԼՈՒԽ ԻԵ
ՂԱՐԱՂՈՒԲԱԹԻ ՍԱՏԱԿԵԼԸ

Այս Ղարաղուբաթը ազգով պարսիկ էր՝ մելիք Սալահենց տոհմից: Մինչդեռ Շահ Սաֆին Երևանի բերդի դեմ (կռվում) էր, այս Ղուբաթը իշխանների դռներում շրջում էր և մեծ կաշառքով առավ Երևան երկրի քալանթարությունը, որ պարսկերեն կոչվում է շահրիարի, իսկ հայերեն չգիտեմ՝ ինչ է կոչվում*: Սակայն ինչ որ է հաստատվեց գործի վրա: Նրա գործը այս էր. ինչ հարկ որ տալիս էին իշխանին (շահին), սա գրում էր գավառապետերին, գավառապետերը գրում էին գյուղերին և ոստիկանների միջոցով հավաքում ու տանում էին իշխանին: Իսկ քալանթար Ղարաղուբաթը փոքր հարկերը գրում էր գավառապետերին, իսկ մեծաքանակը ինքն էր գրում ներհակ ու հակառակ: Էջմիածնին ածուխ էր գրում, Ապարանին՝ եղեգ, Քանաքեռին՝ մայրի գերան, Ծաղկաձորին՝ խակ խաղող: Եվ այսպիսի վտանգավոր բաներով տառապեցնում էր ռամիկներին: Փիլիպոս կաթողիկոսը բազմաթիվ անգամ հանդիմանում էր նրան, բայց նա չէր լսում սրան: Նա մի ծառա ուներ, որին կոչում էին Ղասահմադ. սա քալանթարի կողմից ինչ-որ գործով ուղարկվեց Ֆռանկանոց գյուղը[130]. սա նեղում էր գյուղացիներին: Նրանք եկան կաթողիկոսի մոտ և գանգատվեցին Մահմադից: Կա-

*Քալանթարություն քաղաքապետություն է նշանակում, բայց այստեղ ավելի շուտ հարկահանություն է: